ԼՕՐԵՆՑ ՖՕՆ ՇՏԱՅՆ

Ներկայ դարուս քառասնական թուականները զարգացման և եռման մեծ ժամանակն էին. այդ ժամանակն էր, երբ Եւրոպայում արդէն կատարուած էին սոցիալական, քաղաքական և գիտական յեղափոխութիւններ և երբ սկսեցին մոցնել եւրոպական պետութիւնների մէջ կառավարութեան սահմանադրական ձևը, որ և այժմս գոյութիւն ունի։ Այդ մեծ շարժումների գիտական նշանաւոր վերտերաններից քչերն են վկայ մնացել այժմեայ զարգացման և այդ սակաւներից մէկն է Լորէնց ֆոն Շտայն, այն մարդը, որ անցեալ մայիսին տօնեց իւր դոքտորական հինամեակը և որը հրապարակախօսութեան և գիտութեան մէջ՝ թէ քաղաքականապէս և թէ դոքտրինական կերպով գործել է այն մարդկանց շարքում, որոնք առաջացրել են ներկայ ժամանակի յառաջադիմութիւնը։

Շտայնը սկզբում զինուորական աշակերտ էր Դանեմարքում, յետոյ աշակերտ միջնակարգ դպրոցի Ֆլենսբուրգում, ուստից նա յետոյ անցաւ Ենայի համալսարանը։ Այդտեղ նա դառաւ անդամ ուսանողական հին ընկերութեան (բուրշենշաֆտ), որը շատ հալածուած էր, լինելով ներկայացուցիչ գերմանական միութեան գաղափարի և հակառակորդ այսպէս կոչուած մանրիշխանականութեան (Kleinstaaterei)։ Յետոյ նա աւարտեց ուսումը Կիլի համալսարանում և ստացաւ դոքտորութեան աստիճանը. հէնց այդտեղ էլ նա սկսեց իւր գրական գործունէութիւնը իւր առաջին գրուածքով «Դանիական քաղաքացիական պրոցեսի պատմութիւնը»։

Այդ այն ժամանակն էր, երբ հոգեկան և քաղաքական Եւրոպան երկու բանակների էր բաժանուած։ Մէկ կողմ կանգնած էին Գերմանիայի ֆիլոսոֆայական և իրաւագիտական սիստեմները, որոնք դի-

տական թէօրիաների արգումենտներից դուրս գալով դիմում էին կառավարութիւններին, յորդորելով, որ սոքա իրանք իրանք վերանորոգուեն։ Այդ սիստեմները իրանց քաղաքական շինութիւնները կառուցանում էին Կանտ'ի, Ֆիխտէ'ի և Հեգէլ'ի ֆիլոսոֆայութիւնների հիմունքների վերայ, յետ ու յետ մղելով Ստահլ'ի յետադիմական-ռէակցիօնական գաղափարները, որ ամփոփել էր նա իւր „Restauration der Staatswissenchaften" գրքի մէջ և միւս կողմից ագահաբար սնում էին Ադամ Սմիթ'ի քաղաքատնտեսական և Թիւնէն'ի ու Բէր'ի գիւղատնտեսական վարդապետութիւններով ոգևորուելով այն նախագուշակած պետական — քաղաքական վարչութեան համար, որի մէջ ժողովուրդը ապագայում պէտք է իւր ձայնը ունենար։

Միւս կողմից սակայն արագ ըմբռնումով և զգացումով տաքարիւն ֆրանսական ազգը, խրախուսուած իւր առաջին յաջողութիւններով թագաւորական և ազնուական իշխանութեան վերայ, չէր սպասում, մինչև որ գիտութեան թէօրիաներով նախ համոզի ու ապա միայն գործէ, այլ հարուածներ տուեց այդ խնդրի գորդեան հանգոյցին իւր ապստամբութիւններով, որպէս նաև ոչ խիստ գիտնական սոցիալիստական սիստեմներով և ուտոպիաներով, որոնց հեղինակներն էին՝ Կաբէ՝ Voyage en Icarie յայտնի բանդագուշական-ուտոպիական գրուածքի հեղինակը, Ֆուրիէ, Սէն-Սիմոն, Լույի Բլան, Բաբեֆ և այլն։

Սա մի վկայութիւն է Լորէնց Շտայն'ի համարձակութեան և պետական մարդու հեռատեսութեան, որ նա այդ ժամանակ, անփող որպէս նա էր, վճռեց կաւքով (երկաթուղիների մասին այն ժամանակ դեռ քիչ էր խօսւում) Կիլ'ից գնալ Պարիզ, որը այն ժամանակ այնքան հեռու էր թւում, որպէս այժմ Ամերիկան։ Նորան այնտեղ մղող իդէալը՝ բուն գերմանական գիտնականի իդէալն էր, — այն ոյժերը, որ այն ժամանակուայ պատմական զարգացման մէջ գործում էին և որոնք արտայայտւում էին թէ բարձրագոչ և թէ կամաց ձայնով սոցիալիստների, կոմունիստների և ուտոպիստների կողմից՝ մի օբեկտիւ գիտական սիստեմի վերածել։

Հին մարդկային հասարակութեան այդ ահեղ շարժումները և, այսպէս ասած, մակերևոյթի գալարումները, հասարակութեան, որը մի նոր ձևակերպութեան էին ուզում հասցնել, Շտայնի համար

միայն մասներ էին այն մեծ պատմական պրոցեսի, որի յետևից նա տեսնում էր մի աւելի մեծ պատկեր, այն է՝ մարդկային իրաւունքի, նորա սկզբունքների ու հիմնական գաղափարների մշտնջենական շարժուող նորակազմութիւնը և զարգացման յառաջադիմութիւնը։ Այդ բոլորը Շտայնին թւում էին իբր իրաւունքի պատմութեան և այն էլ մի եւրոպական և նոյն իսկ համաշխարհային իրաւունքի պատմութեան մի մեծ դարագլխի ապտիճաններ։ Եւ այն առաջին հռչակաւոր գիրքը, որ իւր Պարիզում եղած ժամանակի շրջանից էր ծագած (1840—1842 թ.), էր «Այժմեայ Ֆրանսիայի սոցիալիզմը և կոմունիզմը» (1842, երկր. տիպ 1848 թ.), որը հեղինակի ասելով, նախապատրաստական աշխատանք է մի ապագայ եւրոպական իրաւական պատմութեան։ Այդ գրքի երկրորդ մասում նա առաջին անգամ Ֆրանսիայի ընկերական ամբողջ շարժման և նորա ներկայացուցիչների մի նկարագիր տւեց, որից գերազանցը մինչ այժմ էլ ոչ ոք չի տւել. իսկ գրքի աւաջին հատորում նա որոշում է գաղափարս՝ հասարակութիւն, որը այժմեայ գիտնական տերմինոլոգիայով կոչւում է «հասարակական գիտութիւն»։ Եւ նորա գլխաւոր աքսիոմը, թէ հասարակութիւնը և նորա իրաւունքը կախւած է շարժական թէ անշարժ կարողութեան բաշխումից,—այդ ժամանակից դէս դառել է մի հիմնական գաղափար ապագայ ամեն մի իրաւագիտութեան, պատմութեան, և այնքան անհերքելի, որքան մի նոր տարրի գիւտը քիմիայի մէջ։ Նա մեզ աւաջին անգամ ցոյց է տալիս այդ գրքում, թէ ինչպէս մեր դարու առաջին կէսի արած փորձերը ապացոյց տւին, որ անկարելի է պետական կազմակերպութեան և սահմանադրութեան խնդիրը բաժանել կարողութեան բաշխման խնդրից և կամ նոցա դիմել կոմունիստական դաղափարների վերայ, որոնք պահանջում են կարողութեան հաւասար բաշխումը և թէ ինչպէս այն բոլոր յեղափոխութիւնները միայն այս հասարակ հետևանքներն են ունեցած, որ հասարակութեան կազմակերպութիւնը հիմնել են վաստակած կարողութեան վերայ, փոխանակ ժառանգած կարողութեան։

Շտայնի երրորդ մեծ երկը, որ չորս տարի յետոյ լոյս տեսաւ (1846), նոյն գաղափարներով է տոգորւած և նոյնպէս մի նախաշաւիղ է իրաւունքի մի մեծ պատմութեան։ Դա երրորդ մասն է եռահատոր «Ֆրանսիայի պետական և իրաւական պատմութեան», որ նա

միասին Լ. Ա. Վարնկեոնիգ և Թ. Ա. Վարկեոնիգ'ի հետ հրատարակեց։ Ֆրանսիացիների համար պէտք է մի գերմանական զիտական գրէր նոցա սեպհական իրաւական պատմութիւնը!—Երկու տարի յետոյ, (1848) նոյն ժամանակ, երբ երկրորդ տպագրութեամբ լոյս տեսաւ նորա «Սոցիալիզմը», հրատարակեց նա մի յաւելուած այս վերջին գրքի, ուր նա երրորդ (այն է 1848-ի մարտին) Ֆրանսիական յեղափոխութիւնից դէս կատարուած սոցիալիստական և կոմունիստական շարժումներն է ուսանում։ Ամառը 1848 թ. նա երկրորդ անգամ Պարիզ էր գնացած, ակադեմիական ազատ ամիսներին, քանի որ նա 1846-ից Կիլ'ում պրոֆեսոր էր։ 1850-ին լոյս է տեսնում նոր մշակուած ձևով նորա «Պատմութիւն սոցիալական շարժումների Ֆրանսիայում» երեք հատորով, որի մէջ աւելի ընդարձակ և սիստեմական կերպով ձևակերպուած են նորա այդ խնդրի առիթով գրուածները և բաժանած երեք շրջանների՝ սկզբից մինչ 1830 թ., յետոյ 1830—1848, մինչ այսպէս կոչուած «գործարանական հասարակութեան» ժամանակը, իւր սկզբունքներով «թագաւորութեան, հանրապետութեան, ֆրանսիական հասարակութեան ինքնիշխանութեան մասին 1848-ի փետրուարի յեղափոխութիւնից դէս»։

Այս երկերը դեռ չը վերջացրած, Նտայնը իւր ուշքը դարձրեց մի բոլորովին տարբեր գրական ասպարիզի վերայ։ Գերմանիայում և մանաւանդ իւր հայրենի Շլեզուիգ-Հոլշտայնում պատրաստուող քաղաքական եռումները, որոնց նա մօտիկուց մասնակցում էր, նորան դարձրին մէկը նշանաւոր հրապարակախօսներից։ Իւր հայրենի երկրի պետական-իրաւական դրութիւնը լաւ ուսումնասիրելուց յետոյ, նա հրատարակեց 1847-ին իւր «Ներածութիւն Շլեզուիգ-Հոլշտայն դքսութիւնների դասակարգային իրաւունքի»։ Հոչակեցին մանաւանդ նորա երկարամեայ թղթակցութիւնները Շլեզուեգ-Հոլշտայնի մասին Կոտտայի «Ալգեմայնէ-Ցայտունգ» լրագրում։ Եւ շուտով այդ բանից յետո նա կոչուեց գործոն դեր կատարելու Շլեզուիգ-Հոլշտայնի խառնակութիւնների մէջ։ Երբ 1848-ին Շլեզուիգ-Հոլշտայնցիք ինքնակամ կերպով պատրաստութիւններ տեսան պատերազմելու Դանեմարքի դէմ, որը այդ երկիրները կամենում էր նահանգների դարձնել, հակառակ այդ երկրի սահմանադրութեան (այսինքն որ Դանեմարքի թագաւորը լինէր միևնոյն ժամանակ դուքս Շլեզուիգ-Հոլշտայնի),

Շտայնը պէտք է իւր ութ պրոֆեսոր ընկերների և իւր ընտանիքի հետ փախչէր՝ չը կալանաւորուելու համար։

Երեք պրուսական համալսարաններից նա հրաւէրք ստացաւ, բայց չ՝ընդունեց, որովհետև նաև Պրուսիայի պլանների մէջ չէին մտնում նորա քաղաքական ձգտումները Շլեզուիգ-Հոլշտայնի համար։

Մի առ ժամանակ նա իրան նուիրեց հրապարակախօսութեան, այլ 1853-ին եկաւ Վիեննա, ուր ուզեց հիմնել մի մեծ քաղաքական թերթ, մասամբ այն մտքով, որ, Ֆրիդրիխ Լիստի ծրագրով, Միջին-Եւրոպայի և Արևելքի առուտուրը Վիեննայում կենտրոնացնելուն նպաստի։

Յետոյ, հրաժարուելով ընդունել ֆինանսական մինիստրութեան մէջ մի ղեկավար խորհրդականի պաշտօն, որպէս զի իւր գիտնական աշխատութիւններից չ՝շեղուէ, ֆինանսական մինիստր բարոն Բրուքի խորհրդով նա նշանակուեց Վիեննայի համալսարանի քաղաքատնտեսութեան պրոֆեսոր՝ խօլերայից վախճանուած Նօւակի տեղը։ Դորանով սկսում է նորա ծառայութիւնը Աւստրիայում։

Մի կարճ ժամանակ, իւր նոր պաշտօնը ստանձնելուց յետ, նորան զբաղեցրեց իւր հին գաղափարը այն մասին թէ պետական գիտութիւնը պէտք է հիմնուի հասարակութեան գիտութեան վերայ։ Եւ ահա լոյս է տեսնում 1856-ին նորա «Սիստեմ պետական գիտութիւնների»։ Բայց գիտնական ասպարիզում նա սկսում է հանդիսանալ իբր ստեղծող մի այլ գիտութեան, այն է «վարչական գիտութեան» (Verwaltungslehre)։ Այդ գիտութեան հայրը իսկապէս Շտայնն է։ Բոլորը, նոյն իսկ ամենատարրական ոյժերը, որոնք սոցիալական կեանքի մէջ գործում են, թուում են նրան, կամ աւելի լաւ ասած, վարչական գիտութեան, իբր մի մի առարկաներ պետութեան վարչական աշխատանքի։ Նա ջոկեց «կառավարութեան» գաղափարը «վարչութեան» գաղափարից, ցոյց աւեց այն խոր զանազանութիւնը, որ կայ «օրէնքի» և «կարգադրութեան» մէջ։ Նա առաջինն է, որ գիտութեան համար գտաւ նոր սահմանագրական պետութիւնների այդ սկզբունքները։ Եւ նա թէ առաջինը և թէ միակն է, որ Վիեննայի համալսարանում երեսուն տարի շարունակ դասախօսում է այդ առարկան, մի առարկայ, որը ճանաչուեց իբր պարտաւորիչ՝ աւանդական առարկաների շարքում՝ (քա-

զաքատնտեսութիւն, ֆինանսագիտութիւն, իրաւունքի ֆիլոսոֆայութիւն)։ «Վարչութեան իրաւունքի» կամ նաև «պետական գիտութեան» անունի տակ՝ վարչական իրաւագիտութիւնը այդ ժամանակից դէպ ընդունեց նաև գերմանական միւս համալսարաններում, և մինչև անգամ պատճառ դառաւ, որ առանձին պետական գիտութիւնների ֆակուլտետներ բացուեն, որոնց հիմնադրութիւնը Նոսայնի նախաձեռնութեան գործն էր։

Նոսայնի գրական աշխատութիւնները այդ առարկայի վերաբերեալ չեն կազմում մի գիրք, այլ գրքերի մի ամբողջ սիստեմ, որոնցից ամեն մէկը ըմբռնում է վարչութեան մի մեծ ճիւղ և ուր եւրոպական երկիրների վարչական կազմակերպութիւնը առաջին անգամ իրար հետ համեմատեց։

Վարչական գիտութեան մեծ սիստեմը Նոսայնը բաժանեց երկու մասի, որոնցից առաջինն է՝ գործադիր մարմինը, նորա իրաւունքը և նորա կազմակերպութիւնը (1865 թ.) և երկրորդը՝ ներքին վարչութեան ուսումը։ Այդ երկրորդի երեք բաժիններն են՝ անձնական, ոգեկան և տնտեսական վարչութիւն։ Այդ բաժիններից առաջնում խօսւում է «ազգաբնակութեան, առողջապահութեան և ոստիկանական իրաւունքի մասին. երկրորդում խօսւում է՝ կրթութեան, այն է՝ տարրական և արհեստագիտական կրթութեան մասին և մամուլի ու ընդհանուր կրթութեան մասին։ Երրորդ բաժնում խօսւում է զօրքի մասին։

Ամեն մի մասը և բաժինը մի մի հատոր գրքեր են, որոնցից մէկը կամ միւսը ժամանակի ընթացքում նոր տպագրութեան և նոր մշակութեան է ենթարկւել։ Վարչութեան գործը առողջապահական տապարիզում մի նշանաւոր գրուածք է, որը պետական գիտութիւնների գրականութեան մէջ իւր նմանը չ՝ունի։

«Կրթական գործը» իւր նոր մշակուած ձևով (1883) բռնում է երեք հատոր. դա մի մեծ պատմական աշխատանք է կրթական գործի զարգացման մասին իբր պատճառ և հետևանք մասամբ պետական, մասամբ եկեղեցական և մասամբ կրօնական պատմութեան քաղաքակրթուած երկիրներում թէ հնում, թէ միջին դարերում և թէ նոր ժամանակներում։

Ամբողջ աշխատութեան հիմքը կազմում է էլի մի հիմնական

միտք։ Համաձայն մեր կրթական պրոցեսի հիմնական օրէնքի՝ թէ սովորութիւնը, աւանդութիւնը կանգ առած կրթութիւնն է, Շտայնը տալիս է այժմեայ կուիւների պատմական լուսաբանութիւնը վերաբերեալ բէակցիայի և յառաջդիմութեան, կամ կանգ առած սովորութեան և միշտ առաջ գնացող նորաձևութեան՝ մարդկային հասարակութեան մէջ. հասարակութեան, որը հիմնուած է այս սկզբունքի վերայ թէ՝ ամեն մի անձ պէտք է ձեռք բերած կրթութիւնով վերանայ մինչ կարելիին չափ բարձր ոգեկան անկախութիւնը, որպէս զի նա ինքը ինքնաբերաբար այն անել կարողանայ, ինչ ուրիշ դէպքում մարդս անում է ահից՝ հեղինակութեան առջև։

Ոչ մի ուրիշը ցայժմ՝ չի կարողացել բուն մարդկային՝ եկեղեցական-դոգմատիկականից ազատ կրթութիւնը միջնադարեան հումանիստներից սկսած մինչ մեր դարուս սկզբի մեծ կրթիչները՝ Լաւատէր, Բազեդով և ուրիշներ և մինչ մեր նոր ժամանակների դեռ ևս չը դերազանցուած գերմանական դպրոցական գործը այնպէս մասնակից անել եւրոպական կուլտուրայի պատմութեանը, որպէս այդ արել է Լ.օրենց Շտայնը իւր վերոյիշեալ երկով։

Նաև նորա երկը «Ուսումն զինուորական գործի մասին, որպէս մասն պետական գիտութիւնների» (1872) նկատուած է որպէս վարչական գիտութեան վերաբերեալ աշխատութիւնների սիստեմի օղակներից մէկը։ Ինչպէս իւր գրուածքներից մէկում նա խառնել էր բժշկական խնդիրների մէջ, այնպէս էլ այս գրքով նա, որպէս վարչական իրաւունքի ուսուցիչ՝, առանց զինուորական լինելու, պատերազմական ասպարիզում տեղ է տալիս պետական գիտութիւններին։ Առաջ որպէս յայտնի է, զինուորները մնում էին զինուոր ցմահ։ Նոքա ծնում էին իբր զինուորներ, դոքա կոչումով զինուորներ էին։ Բայց որքան կոչումով զինուորականութիւնը դառաւ ժողովրդական—ընդհանուր զինուորականութիւն, այնքան էլ նա՝ ընդհանուր զինուորագրութեան սկզբունքի ոյժով՝ դառաւ մի մաս ընդհանուր պետական վարչութեան և որքան զօրքերը մեծանում են, այնքան աւելի նոցա վարչական մասը կարևորութիւն է ստանում. այժմեայ պատերազմները և յաղթութիւնները կիսով և թերևս աւելի չափով կախուած են զօրքի վարչութիւնից։ Շտայնը ընտրեց պատուաւոր անդամ Վիեննայի զինուորադիտական ընկերութեան, որով ա-

պացոյց տուեց թէ որքան հայրենիքի մասնագիտական աշխարհը գնահատեց նորա այդ աշխատութիւնը։

Իւր բոլոր աշխատութիւնները վարչական իրաւունքի մասին Նտայնը ինքը ամփոփեց մի ձեռնարկի մէջ՝ «Ձեռնարկ վարչական գիտութեան» (առաջին տիպը 1870-ին, երկրորդ՝ տիպը 1876-ին), որը բազմաթիւ ուրիշ՝ նորանից յետոյ գրած հեղինակների՝ նման ձեռնարկներից նորանով է տարբերւում, որ նա տալիս է ոչ թէ մի հատ պետութեան կազմակերպութեան նկարագիրը, այլ տալիս է պետական վարչութեան ուսմունքի մի սիստեմ, որով Եւրոպայի երկիրների մեծամասնութիւնը իրար հետ համեմատում է։

Նշանաւոր գրուածք է նաև Նտայնի «Քաղաքատնտեսական գիտութիւնը» (առաջին տիպը 1858, երկրորդը՝ 1878, երրորդը 1887)։ Այդ ասպարիզի վերայ նա ունի նաև աւելի մանր գրուածքներ, որպէս՝ «Գիւղատնտեսական կրթութիւն», «Գիւղացիական կալուածք և ծխային իրաւունքը» (1882) մի յաւելուածով հողատիրութեան մասին։

Նորա գրուածքը՝ Կինը քաղաքատնտեսական ասպարիզում մինչև անդամ ժողովրդական դարձրեց — Նտայնի անունը։

Բայց այն ասպարէզը, ուր նա, որպէս սոցիալիական խնդրում և վարչական գիտութեան մէջ, նա ամենից շատ վաստակ ունի, է ֆինանսական գիտութիւնը։ Նորա «Ֆինանսական գիտութիւնը» (առաջին տիպ 1860, հինգերրորդ տիպ 1886 թ.) ժամանակով դառաւ մի հիմնական աշխատութիւն, որի հետ կարող են դնել միայն Ռաու'ի գրուածքները և սոցա վերայ հիմնուած Ագոլֆ Վագների ֆինանսական աշխատասիրութիւնները։ Նա առաջինն էր, որ սիստեմական կերպով մոցրեց այդ գիտութեան մէջ սահմանադրութեան և վարչութեան զանազանութեան գաղափարը։ Այդտեղ խօսւում է նախ՝ ֆինանսական սահմանդրութեան, ֆինանսական օրէնսդրութեան, բիւջետի որպէս ֆինանսական օրէնքի նախագծի մասին, գործադիր իշխանութեան և ֆինանսական գործի սահմանադրական վարչական իրաւունքի մասին։ Միւս կողմից ֆինանսական վարչութեան են վերաբերում պետական տնտեսութեան երեք մեծ ճիւղերը՝ պետութեան կարողութիւնը, հարկագիտութիւնը և պետական պարտքերի գործը։ Եւ որքան մեզ յայտնի է, գրքի այս վերջին բաժնում առաջին անգամ մանրամասն կերպով համեմատու-

թիւններ արեցին Եւրոպայի պետութիւնների պարտքերի և թուղթ դրամի սիստեմների համար։

Այսքանը նորա մասնագիտական աշխատութիւնների մասին։ Բայց Շտայնը ունի մի շարք նշանաւոր գրուածքներ, լիքը վերանորոգիչ գաղափարներով։ Դոցանից նշանաւորներիցն է «Ներկան և ապագան Գերմանիայի պետական զիտութիւնների (1876), որի մէջ նա այս նշանաւոր միտքն է արծարծում, թէ «իրաւունքի բովանդակութիւնը իրաւունքը չէ, այլ այն ոյժերի գիտութիւնը, որոնք արտադրում են նորան։ Այդ գրուածքի առաջին գլխում նա տալիս է հռովմայական իրաւունքին իւր իսկական տեղը, իբր իրաւապատմական նախապատրաստող միջոց մեր այժմեայ իրաւունքի (իրաւաբանութեան) համար. հետևեալ գլուխներում նա ցոյց է տալիս այն ոյժերը, որոնք մեր այժմեայ միշտ առաջ ընթացող հասարակական կարգերի հիմքն են կազմում և որոնք կազմել են մեր այժմեայ իրաւունքը. այն է՝ սեռական կարգերը, դասակարգային կարգը և քաղաքացիական հասարակութեան կարգը, որոնց իրաւունքը դեռ ևս միշտ նորակազմ շարժողութեան մէջ է գտնւում։

1879-1880 թ-ին լոյս տեսան նորա երկու շատ հետաքրքրական գրուածքները։ «Պետական գիտութեան զարգացումը հին յոյների մէջ» (1879) յետոյ «Վաշխառութիւնը և նորա իրաւունքը», ուր վաշխառութեան զանազան տեսակները քաղաքատնտեսական տեսակէտից ամփոփւում են մի սիստեմի մէջ, որի մէջ նոցանից իւրաքանչիւրը նկատւում է իբր ծնունդ կեանքի այլ և այլ հանգամանքների։

Յիշատակելու արժանի է նորա մի փոքրիկ բրոշիւրը՝ «Ուսուցանելու ազատութիւնը, գիտութիւնը և ուսանողական վճարը» (1875), որը այդ ժամանակ իւր յաղթութիւնը տարաւ այն վտանգաւոր նորութեան դէմ, որով ուզում էին համալսարանական պրոֆեսորներին մի հաստատ ռոճիկ տալ։ Շտայնի միտքը այս էր, որ պրոֆեսորների մէջ պէտք է յարատևէ ազատ մրցութիւնը գիտնական վաստակների համար, որոնց չափը չափւում է պրոֆեսորի լսողների թւով և ուսանողական վարձատրութեան մեծութիւնով։

Այս բոլոր գրուածքներից դուրս, Լ.օրենց ֆօն Շտայնը իւր սկզբնական տարիներից դէս չի թողել հրապարակախօսական ասպարիզում

գործելու, գլխաւորապէս նախկին Աուգսբուրգի, իսկ այժմ Միւնխենի «Ալգեմայնէ Ցայտունգ» (հանրային լրագիր) օրաթերթում, և «Հիւսիս-Հարաւ» գերմանական ամսագրում։ Վերջինումս տպածներից մէկն է մի շատ սիրուն յօդուած «Երաժշտութիւնը պետական գիտութիւնների մէջ», որի մէջ երաժշտական գործիքներին՝ պատմութեան և մարդկային հասարակութեան կարգերի տեսակէտից՝ իրանց օրգանական տեղն է տրուում։ Նէյին (Ֆլէյտա) իւր սկիզբն է առնում խաչն։ արած ցեղերի մէջ, ջութակի և թմբուկի աղբիւրը՝ ոչխարապահութեան և կաշեգործութեան մէջ է, փողը՝ հանքագործութեան է պարտական և ձիաւոր զինուորին, ամբողջ օրքեստրը կարող էր ստեղծուել միմիայն մեծ կալուածատիրութեան ազդեցութեան ներքոյ, մինչդեռ այնքան ատուած և այնքան սիրուած դաշնամուրը ներկայանում է որպէս քաղաքացիականութեան արդասիք։

Պէտք էր ասասել, որ Նետայնի նման ուղեղը աւելի կը ձգտէր բանաստեղծութիւնը պրոզայացնել, քան բանաստեղծական իդէալներով հրապուրել։ Որ այդպէս չէ, ապացոյց են նորա «Ալպեան վարդերը», հաւաքածու ոտանաւորների, որոնք երկար ժամանակ նորա գրասեղանում փակուած մնացելուց յետ վերջապէս հրապարակ եկան։ Նետայնի վերջին գրուածքն է, որպէս այդ իմանում ենք նորերումս, «Կինը, նորա կրթութիւնը և կեանքի կոչումը» (1890 թ.), որով նա երրորդ տպագրութեամբ մի գիրք է նորից մշակել, որի առաջին տպագրութիւնը լոյս տեսաւ 38 տարի առաջ, ծածկանունի տակ։ Նետայնը կապում է կանանց խնդիրը քաղաքատնտեսութեան հետ և, որպէս այդպիսին, Նետայնը առաջին գիտնական հեղինակն է այդ խնդրի մէջ։ Գրքի հիմքում դրուած են երկու գաղափարներ։ Քաղաքատնտեսական գաղափարը տան տիկնոջ յատկացնում է սպառման մեծ ճիւղը, մինչդեռ բոլոր քաղաքատնտեսական դպրոցները մինչ այժմ միայն արդիւնաբերութիւնն էին ճանաչում։ Միւս կողմից այդ գիրքը մի յորդոր է կանանց կրթութեան գործին, որը «աղջիկներին կրթում է մարդու գնալու և ոչ ամուսնութեան համար», որովհետև տղամարդու առանձին և սահմանափակ եկամուտների բաժանումը, ցրուելը, բաշխումը առօրեայ տնային պէտքերի համար կոչումն է և մի արհեստ, որպէս է և տղամարդու արդիւնաբերող գործը։

Այս անսովոր գրական և գիտնական բեղմնաւորութիւնը նշանաւոր գիտնականին ամենևին չի խանգարել նաև գործնական թէ գրական և թէ առևտրական ձեռնարկութիւնների մէջ գործունեայ լինել։ Աւստրիայում այժմ ծաղկող ձեռնարկութիւններից մէկը կամ միւսը նոայնին են պարտական կամ մասամբ կամ ամբողջապէս։

Նա է հիմնադիրը և երկարամեայ նախագահը «Աւստրիա» անունով կեանքի ապահովութեան և խորհրդի անդամ է մի մեծ երկաթուղու. նա է հիմնադիրը «Անշարժ կայքերի ընկերութեան» որը վարկի ընկերութեան նման մի հիմնարկութիւն է։ Նա ծնունդ տուեց «Օրէնսդրութեան և վիճակագրութեան կենտրոնական արխիւ» անունով պարբերական հրատարակութեան։ Նա էր մէկը խմբագիրներից «Աւստրիա» ամսագրի առևտրական մինիստրութեան մէջ. նա է հիմնողը և խմբագիրը առաջին Աւստրիական երկաթուղային թերթի, որը Եւրոպայի ամենաւեծերից մէկն է դառել, որպէս նաև «Կենտրոնական թերթի երկաթուղիների և նաւագնացութեան համար», որը օրդան էր դառել տէրութեան ամբողջ երկաթուղային գործի և որը այժմ առացել է մի ուրիշ ձև (Verordnungsblatt)։ Դորանով յառաջացած պակասը նա ձեռաց լրացրեց հիմնելով «Ամսագիր երկաթուղիների և նաւագնացութեան», որը այս երեք տարում բարձրացել է մինչ երկաթուղային քաղաքականութեան և վարչութեան հեղինակաւոր ամսագրի աստիճանը։

Իւր արդիւնագործական ձեռնարկութիւնների մէջ յաջողութիւնը միշտ չի խրախուսել նորա եռանդոտ և բազմակողմանի նախաձեռնութիւնը։

Մի նոր գտած ակրատոթերմ ջրերի վերայ նա հիմնեց մի հանքաջրային կայարան «Ֆրանց-Իոզէֆ-բադ Տիւֆֆեր» Աւստրիայում, որը այժմ էլ ծաղկում է իբր «Նոայէրի Գաշտէյն»։ Բայց երբ նա, ապակագործութեան բելգիական սիստեմը ներմուծելու համար մի ընկերութիւն հիմնեց և այդ նպատակով անսահման երաշխաւորութիւններ յանձն առաւ կապիտալներ ձարելու համար՝ նա իւր բոլոր կարողութիւնը կորցրեց՝ ապակու գնի յանկարծակի անկման պատճառով, բայց գլխաւորապէս գործավարութեան մէջ պատահած մեծ անկարգութիւնների պատճառով։

Այսպիսով նա իւր հին հայրենիքում մարտիրոս եղաւ իւր հայ-

բենասէր ձգտումներին, նոր հայրենիքում՝ նա հնձեց թէ պատիւ և թէ գժբաղդութիւն։ Օրէնքի համաձայն, 30 տարի պրոֆեսորութիւնից յետ, նա պէտք է թողներ ամբիոնը։ Համալսարանը թողնելիս, նորա ընկերները ուղղեցին նրան մի ուղերձ, որը շատ սակաւներին է վիճակում, քանի որ նա համալսարանի ռեկտոր չէր։ Տէրութիւնից ունի ստացած զանազան շքանշաններ և այժմ էլ մնում է անդամ Վիեննայի Գիտութիւնների ճեմարանի, պատուաւոր անդամ զինուորագիտական ընկերութեան, անդամ ստատիստիքական կենտրոնական մասնաժողովի, պետական երկաթուղիների խորհրդի և պատուաւոր քաղաքացի։ Տիւֆֆէր աւանի Նոտայէրմարկում։

Նոտայնի համաշխարհային գիտական հռչակը նաև արտասահմանից մեծ պատուութեան առիթներ տուեց՝ Իտալիայից, Ռուսիայից, Ֆրանսիայից և Եապոնիայից։ Նա անդամ է մի քանի գիտական ակադեմիաների արտասահմանում։

Եօթանասնամեակը անցած Նոտայնը, որպէս հաղորդում են, դեռ ևս զարթ առողջութեան տէր է և առոյգ. այնպէս որ պէտք է յուսալ, որ նորա գործունէութեան այս նկարագիրը դեռ ևս լրացնելու կարօտ կը լինի նորա մահկանացուի գործքերի ամբողջութեան տեսակէտից։

Ա. Ա.